

#ԵլիրՀանունՄարդուԻրավունքների
#STANDUP4HUMANRIGHTS

70

ՏԱՐԻ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ
ՀՈՉԱԿԱԳԻՐ





ՄԱՐԴՈՒ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ՀՈՉԱԿԱԳԻՐ

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր Universal Declaration of Human Rights

Հայերեն թարգմանությունը և այս հրատարակությունը՝
ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության
երևանյան գրասենյակի

© 2017 ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչություն



Հրատարակվել է «Աստղիկ» տպարանում

Ներածություն

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որն ընդունվել է 1948թ. դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից Փարիզի Շայո պալատում (Ֆրանսիա), նախագծվեց որպես անմիջական արձագանք այն աղետների և բարբարոսությունների, որոնց զոհ էին դարձել աշխարհի ժողովուրդները Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում:

Այն բովանդակում է համաշխարհային արժեքները, որոնք չեն սահմանափակվում առանձին մշակույթներով, պետություններով ու կրոններով, և հռչակում է այն անօտարելի իրավունքները, որ պատկանում են յուրաքանչյուր մարդու՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, կրոնից, սեռից, լեզվից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, սեփականությունից, գույքային, դասային կամ այլ վիճակից:

Հռչակագիրը բաղկացած է 30 հոդվածից:

1946թ. հունիսին՝ համաշխարհային պատմության ամենաարյունալի հակամարտությունից հետո, Նորաստեղծ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհուրդը հիմնադրեց Մարդու իրավունքների հանձնաժողովը, որն ուներ ազգային և քաղաքական տարբեր հենք ունեցող 18 անդամ: Հանձնաժողովը, որը Միավորված ազգերի կազմակերպության մշտական մարմիններից է, կոչված էր կազմելու և մշակելու հռչակագրի տեքստը: Այն ստեղծեց Մարդու իրավունքների համընդհանուր

հռչակագրի նախագծի մշակման հատուկ կոմիտե, որի նախագահն էլեանոր Ռուզվելտն էր: Կոմիտեն պետք է գրեր Հռչակագրի հոդվածները: Երկու տարվա ընթացքում կոմիտեն երկու նստաշրջան գումարեց:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը ՄԱԿ-ի քարտուղարության Մարդու իրավունքների բաժանմունքի տնօրեն կանադացի Ջոն Փիթերս Համֆրիին լիազորեց զբաղվել նախագծի մշակման աշխատանքներով: Շուտով նրան միացան կոմիտեի այլ ճանաչված փորձագետներ, որոնց թվում էին Ռենե Կասսինը՝ Ֆրանսիայից, Չարլզ Մալիկը՝ Լիբանանից, Պենգ-չուն Չանգը՝ Չինաստանից, Ուիլյամ Հոջսոնը՝ Ավստրալիայից, Էռնան Սանտա Կրուզը՝ Չիլիից, Ալեքսանդր Բոգոմոլովը՝ Խորհրդային Միությունից, և Չարլզ Դյուկսը (լորդ Դյուկստոն)՝ Միացյալ Թագավորությունից: Պարոն Համֆրին ներկայացրեց նախագծի առաջին տարբերակը, որը հիմք դարձավ հանձնաժողովի կողմից լրամշակման համար:

Երբ կոմիտեն ավարտեց իր աշխատանքը 1948թ. մայիսին, նախագիծը հավելյալ քննարկեցին Մարդու իրավունքների հանձնաժողովը, Տնտեսական և սոցիալական խորհուրդը և Գլխավոր ասամբլեայի Երրորդ կոմիտեն՝ նախքան 1948 թ. դեկտեմբերին այն կքվեարկվեր: Այդ ընթացքում ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից տեքստը լրամշակելու բազմաթիվ առաջարկություններ արվեցին:

Այսօր Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն աշխարհում ամենաշատ թարգմանված տեքստն է: Սա Հռչակագրի համընդհանուր բնույթի վավագույն վկայությունն է:

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ՀՌՉԱԿԱԳԻՐ**

**Ընդունված և հռչակված
Ընդհանուր վեհաժողովի
1948 թ. դեկտեմբերի 10-ի
217 A (III) բանաձևով**

Նախաբան

Նկատի առնելով, որ մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհում ազատության, արդարության և խաղաղության հիմքն է,

Նկատի առնելով, որ մարդու իրավունքների անտեսումն ու դրանց նկատմամբ արհամարհանքը հանգեցրել են մարդկության խիղճը վրդովող բարբարոսական գործողությունների, և որպես մարդկության վեհ նպատակ հռչակված է այնպիսի աշխարհի ստեղծումը, որտեղ մարդիկ կվայելեն խոսքի և համոզմունքի ազատություն և զերծ կլինեն վախից ու կարիքից,

Նկատի առնելով, որ կարևոր է իրավական պետության կողմից մարդու իրավունքների պաշտպանությունը, որպեսզի մարդը հարկադրված չլինի դիմելու բռնակալության ու ճնշման դեմ ապստամբության՝ որպես վերջին միջոցի,

Նկատի առնելով ազգերի միջև բարեկամական հարաբերությունների զարգացումը խթանելու կարևորությունը,

Նկատի առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպության ժողովուրդները Կանոնադրության մեջ վերահաստատել են իրենց հավատը մարդու հիմնարար իրավունքների, անհատի արժանապատվության ու արժեքի և տղամարդու ու կնոջ

իրավահավասարության նկատմամբ և վճռել են քաջալերել սոցիալական առաջընթացն ու կենսամակարդակի բարելավումն առավել ազատության պայմաններում,

Նկատի առնելով, որ անդամ պետությունները պարտավորվել են, Միավորված ազգերի կազմակերպության հետ համագործակցելով, հասնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքի ու դրանց պահպանման քաջալերմանը,

Նկատի առնելով, որ այդ իրավունքների ու ազատությունների ընդհանուր ըմբռնումը վիթխարի նշանակություն ունի այս պարտավորության լիակատար իրականացման համար՝

Գլխավոր ասամբլեան հռչակում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը՝ որպես բոլոր ժողովուրդների ու ազգերի կողմից նվաճվելիք ընդհանուր մի չափանիշ, որպեսզի յուրաքանչյուր անհատ և հասարակության ամեն մի մարմին, մշտապես մտապահելով սույն Հռչակագիրը, ձգտի ուսման ու կրթության միջոցով քաջալերել հարգանքն այս իրավունքների ու ազատությունների նկատմամբ և ազգային ու միջազգային առաջադիմական միջոցառումներով ապահովել դրանց համընդհանուր և արդյունավետ ճանաչումն ու պահպանումը ինչպես անդամ պետությունների ժողովուրդների, այնպես էլ դրանց իրավագործության ներքո գտնվող տարածքների ժողովուրդների կողմից:

Յոդված 1

Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց վերաբերվել եղբայրության ոգով:

Յոդված 2

1. Յուրաքանչյուր ոք ունի սույն Յռչակագրում ամրագրված բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ առանց որևէ տարբերակման այնպիսի հիմքերով, ինչպիսիք են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքը, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրույթունը, ծնունդը կամ այլ կարգավիճակ:

2. Ավելին, չպետք է կատարվի որևէ տարբերակում՝ ելնելով այն երկրի կամ տարածքի քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակից, որին պատկանում է անձը, լինի այն անկախ, ինսամարկյալ, ոչ ինքնավար կամ ինքնիշխանության որևէ այլ սահմանափակումով:

Յոդված 3

Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և անձի անձեռնմխելիության իրավունք:

Յոդված 4

Ոչ ոք չպետք է պահվի ստրկության կամ կախյալ վիճակում. ստրկությունը և ստրկավաճառությունը, իրենց բոլոր դրսևորումներով, արգելվում են:

Յոդված 5

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային, նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Յոդված 6

Յուրաքանչյուր ոք ամենուր իրավունք ունի ճանաչվելու որպես իրավասուբյեկտ:

Յոդված 7

Բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանվածության իրավունք: Բոլորն ունեն սույն Յոդակագիրը խախտող ցանկացած խտրականությունից և նման

խտրականության ցանկացած հրահրումից հավասար պաշտպանության իրավունք:

Յոթերորդ 8

Յուրաքանչյուր ոք, սահմանադրությամբ կամ օրենքով իրեն վերապահված հիմնարար իրավունքների խախտման դեպքում, ունի ներպետական իրավասու ատյանների կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք:

Յոթերորդ 9

Ոչ ոք չպետք է ենթարկվի կամայական ձերբակալման, կալանքի կամ արտաքսման:

Յոթերորդ 10

Յուրաքանչյուր ոք, իր իրավունքների և պարտականությունների սահմանման և իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում, ունի լիակատար հավասարության պայմաններում անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի ու հրապարակային դատաքննության իրավունք:

Յոթերորդ 11

1. Քրեական հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի

համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ըստ օրենքի, հրապարակային դատաքննությամբ, որի ժամանակ նա ունեցել է իր պաշտպանության համար անհրաժեշտ բոլոր երաշխիքները:

2. Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ քրեական հանցագործության համար՝ կապված ցանկացած գործողության կամ անգործության հետ, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև կիրառվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին:

Յոդված 12

Ոչ ոք չպետք է ենթարկվի իր անձնական կյանքի, ընտանիքի, բնակարանի կամ նամակագրության նկատմամբ կամայական միջամտության, ինչպես նաև՝ որևէ ոտնձգության իր պատվի ու հեղինակության նկատմամբ: Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքով պաշտպանվելու իրավունք:

Չոդված 13

1. Յուրաքանչյուր ոք ունի տվյալ պետության սահմաններում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, այդ թվում՝ սեփական երկրից մեկնելու և իր երկիրը վերադառնալու իրավունք:

Չոդված 14

1. Յուրաքանչյուր ոք ունի հետապնդումից այլ երկրներում ապաստան հայցելու և դրանից օգտվելու իրավունք:

2. Այս իրավունքը չի կարող վկայակոչվել ոչ քաղաքական հանցագործությունների կամ Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին հակասող արարքների կապակցությամբ հետապնդման դեպքում:

Չոդված 15

1. Յուրաքանչյուր ոք ունի քաղաքացիության իրավունք:

2. Ոչ ոք չպետք է կամայականորեն զրկվի իր քաղաքացիությունից կամ իր քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

Յոդված 16

1. Չափահաս տղամարդիկ ու կանայք, առանց ռասայական, ազգային կամ կրոնական որևէ սահմանափակման, իրավունք ունեն ամուսնանալ և ընտանիք կազմել: Նրանք հավասար իրավունքներ ունեն ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծվելիս:

2. Ամուսնությունը կարող է կայանալ միայն ամուսնացողների ազատ ու լիակատար համաձայնության դեպքում:

3. Ընտանիքը հասարակության բնականոն ու հիմնարար խմբային միավորն է և ունի հասարակության ու պետության կողմից պաշտպանության իրավունք:

Յոդված 17

1. Յուրաքանչյուր ոք ունի ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ սեփականություն ունենալու իրավունք:

2. Ոչ ոք չպետք է կամայականորեն զրկվի իր սեփականությունից:

Յոդված 18

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը

Ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատություն և միանձնյա կամ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով իր կրոնը կամ համոզմունքը քարոզելու, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:

Յոթերորդ Բնագրի 19-րդ հոդված

Յուրաքանչյուր ոք ունի կարծիք ունենալու և այն ազատորեն արտահայտելու իրավունք. այս իրավունքը ներառում է կարծիքներին, առանց միջամտության, հավատարիմ մնալու, անկախ պետական սահմաններից և ցանկացած միջոցով տեղեկատվություն ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Յոթերորդ Բնագրի 20-րդ հոդված

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ու միավորումներ կազմելու իրավունք:
2. Ոչ ոքի չի կարող հարկադրվել անդամակցելու որևէ միավորման:

Յոթերորդ Բնագրի 21-րդ հոդված

1. Յուրաքանչյուր ոք ունի իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք՝ անմի-

ջականորեն կամ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով:

2. Յուրաքանչյուր ոք ունի իր երկրում պետական ծառայության մտնելու հավասար հնարավորության իրավունք:

3. Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը. այն պետք է արտահայտվի պարբերական և իրական ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարարժեք ընթացակարգերի միջոցով:

Յոդված 22

Յուրաքանչյուր ոք, որպես հասարակության անդամ, ունի սոցիալական ապահովության իրավունք և, ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով, ինչպես նաև՝ յուրաքանչյուր պետության կազմակերպմանն ու ռեսուրսներին համապատասխան օգտվում է իր արժանապատվության և իր անձի ազատ զարգացման համար անհրաժեշտ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից:

Հոդված 23

1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության, արդար ու նպաստավոր աշխատանքային պայմանների ու գործազրկությունից պաշտպանվածության իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության իրավունք՝ առանց որևէ խտրականության:

3. Յուրաքանչյուր աշխատող ունի իր և իր ընտանիքի համար մարդկային արժանապատվությանը հարիր գոյությունն ապահովող արդար ու նպաստավոր վարձատրության և, անհրաժեշտության դեպքում, այն սոցիալական ապահովության այլ միջոցներով լրացնելու իրավունք:

4. Յուրաքանչյուր ոք ունի արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունք՝ հանուն իր շահերի պաշտպանության:

Հոդված 24

Յուրաքանչյուր ոք ունի հանգստի ու ժամանցի, այդ թվում՝ աշխատանքային ժամերի

ողջամիտ սահմանափակման և վճարովի պարբերական արձակուրդների իրավունք:

Յոդված 25

1. Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ սննդի, հագուստի, բնակարանի և առողջապահության ու սոցիալական անհրաժեշտ ծառայությունների իրավունք, ինչպես նաև ապահովության իրավունք՝ գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ հանգամանքներում գոյության այլ միջոցներից զրկվելու դեպքում:

2. Մայրությունն ու մանկությունը հատուկ հոգածության և օժանդակության իրավունք ունեն: Ամուսնության մեջ կամ դրանից դուրս ծնված բոլոր երեխաներն օգտվում են սոցիալական միևնույն պաշտպանությունից:

Յոդված 26

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Կրթությունը, առնվազն տարրական և հիմնական փուլերում, անվճար է: Տարրական կրթությունը պարտադիր է: Տեխնիկական և

մասնագիտական կրթությունը պետք է լինի հանրամատչելի, իսկ բարձրագույն կրթությունը՝ հավասարապես մատչելի բոլորի համար՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների:

2. Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ռասայական կամ կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուժողականությանն ու բարեկամությանը, էլ ավելի նպաստի Միավորված ազգերի կազմակերպության խաղաղապահ գործունեությանը:

3. Ծնողներն ունեն իրենց երեխաների համար կրթության տեսակն ընտրելու առաջնային իրավունք:

Յոթված 27

1. Յուրաքանչյուր ոք ունի հասարակության մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստից բավականություն ստանալու և գիտական առաջընթացից և դրա բարիքներից օգտվելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի իր հեղինակած ցանկացած գիտական, գրական կամ գեղարվեստական ստեղծագործությունից գոյացող բարոյական և նյութական շահերի պաշտպանության իրավունք:

Չոդված 28

Յուրաքանչյուր ոք ունի սոցիալական և միջազգային այնպիսի կարգի իրավունք, որում լիովին իրագործելի են սույն Չռչակագրում շարադրված իրավունքներն ու ազատությունները:

Չոդված 29

1. Յուրաքանչյուր ոք պարտականություններ ունի այն համայնքի առջև, որտեղ և միայն հնարավոր է նրա անձի ազատ ու լիարժեք զարգացումը:

2. Իր իրավունքներն ու ազատությունները իրականացնելիս յուրաքանչյուր ոք ենթակա է միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով՝ բացառապես ուրիշների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքը երաշխավորելու և ժողովրդավարական հասարակությունում բարոյականության, հասարակական կարգի և

ընդհանուր բարեկեցության արդարացի պահանջներն ապահովելու նպատակով:

3. Այս իրավունքների և ազատությունների իրականացումը ոչ մի դեպքում չպետք է հակասի Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին:

Յոթերորդ 30

Սույն Յոթերորդում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես որևէ պետության, մարդկանց խմբի կամ առանձին անհատների ընդդեմ իրավունք՝ զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի արարք, որը նպատակաուղղված լինի սույն Յոթերորդում շարադրված իրավունքների և ազատությունների ոչնչացմանը: